

կեցած են չոն, ուրկէ անլին ալ չէ զօրած իրենց տեսակ մը ինքօզնական ոյժը, և ըստ այդմ՝ իրենք ալ իրենց կարգին արժանացած են, Պոլիսցի բանիբուն միջակայքիններուն հետ, մեծ ամիրաներէն շատ աւելի դիմանալու՝ իրենց դիրքին հարստութեան և ազդեցութեանը մէջ: Եւ ասոնք եղած են ընդհանրապէս՝ Պաշէ կոչուած արհեստագետները, ոսկերիչներու, Ղազէզնիբու և Պէզգիներու մեծերը, զարպխանեցիները ու մեծաքանակ վաճառողները: Տպէտ այլ բանդէտ ամիրիկներու աղաներ, որ կենցաղելու արուեստին գիտուններն էին, գիտէին շահիլ և սիրաշահիլ ալ լրջութեամբ՝ թէպէտ չգիտէին մեղի պէս գրել, կարդալ, ճառել ու վիճել:

## Ը.

Ըստ այսմ՝ մեծ-նոր խանի, Վալիտէ խանի, Վէզիր խանի ամիրաներն՝ եղած են մեծ մասով ակնցի կամ ուրիշ քաղքցի սեղանաւորներ (բաց ի Բաբերլէ, Եզնկայէ, Խարբերդէ, Կեսարիայէ ու Երեւանէ)՝ քիչերը վաճառական: Եւ ասոնց իւրաքանչիւրն՝ իր քաղաքակիցներն այլամերժօրէն առաջ քաշելու և Պոլիսի հանրական իրողութեանց մէջ ազդեցութիւն և հրամայատութիւն վաստակելու աշխատած են մինչև վերջ՝ խստանալով պահանջկոտ և անագորոյն դատնալով առ դրացին առ իւր համազդի օտար, և թոյլնալով առատանալով ու ներելով ամէն արտուղութիւն իրենին սպառնականին կամ պաշտպանեալին և կամ իր կիրքերը փայփայող անարժանին... Իսկ թէ ակնցի թէ այլ քաղքցի՝ վառօղակետ, ճարտարագետ, հացովաճառ ու արհեստագէտ ամիրաներն՝ ունենալով այլ վերիններէն գործնապէս դատուցեալ զնացք մը և իրենց հարտարարուեստական մտացիութեամբը՝ ըլլալով աւելի աշխարհամերձ աւելի խօսք հասկըցող, կը յիշուին բնականաբար դատ՝ ինչպէս հանրական գործելու մէջ ալ կը գործեն զատարար, որոնց գործառնութիւններն ալ